

## ՔՈՒՉԱԿ ՆԱՀԱՊԵՏԻ ԵՐԳԵՐԸ

(Նուէր պ. Մ. Արեղևանին) .

Գ .

Պապ-Քուչակի և Թոռ-Քուչակի միւս երգերը.—Նահապետի երգերի գեղարուեստական կազմութիւնը. — Անգուն և ոճը. — Բանաստեղծական պատկերները. — Նահապետի լեզուին լատուկ բառերը. — Հայերէն ու Անտոնի կոչուած տաղաչափութիւնը և Նահապետի երգերի չափը :

Նահապետի երգերը հրատարակել է Արխատակէս վ. Տևկանց իւր «Հայերգում», հանելով 1593 թուին օրինակուած մի գրչագրից: Թէ արդեօք ուրիշ երգեր էլ ունի նահապետը ինձ լաւանի չէ, միայն պ. Կոստանեան իւր «Նոր ժողովածուի» Ա պրակում գնում է մի երգ «տաղ գեղեցիկ և աղնիւ» վերնագրով, որը նա հանում է 1695 թուին գրած մի տաղարանից և որի հեղինակը թէև չի լիշուում, բայց անկասկած մեր Քուչակն է, որովհետև ոչ միայն լեզուն և պատկերները նոյն են բոլորովին Հայերգում եղած նահապետի երգերի հետ, այլ և վեց (աստղանիշ) տներ գրեթէ բառացի նոյն են Հայերգում եղած Քուչակի երգերի զանազան կտորների հետ: Այս երգի մէջ աւելի նոր բան չկայ և եթէ մի երկու բան էլ այստեղ նոր են, պատճառը նոյն բանի այլ կերպ երգելն է, որ նկատելու էլ առանձին արժէք չունին:

Հայերգում բերած է և Թոռ-Քուչակի մի երգը որի մէջ նա միայն մի «գուզալի» է գովում իւր մանրամասնութեամբ (Հայերգ երես 63): Թոռ-Քուչակի այս երգը, ինչպէս Հ. Տևկանցն էլ նկատում է իր գրքի լառաջաբանում, «այլք անանուն սարկաւազի մը կուտան»: Եւ լիրաւի այս երգի պէս մի երգ կ'ալ Քնար-Հայկականի 167 երեսում, որի տները, երբեմն էլ միայն տողերը նման են Հայերգում եղած Թոռ-Քուչակի

երգի հետ Թէև Քնար-Հայկականի մէջ եղած վարիանտի մէջ ասուած է՝ սարկաւազ ասող բանիս... և այլն, բայց այդ չի խանգարում, որ Հայերգի մէջ եղած կրգը ապահովութեամբ Թռու-Քուչակին վերագրենք, որովհետև սարկաւազի վարիանտը նախ՝ աւելի կարճ է քան Թռու-Քուչակինը և երկրորդ այդ երկու վարիանտները ուշի ուշով համեմատողը հնչտութեամբ կտեսնի որ սարկաւազի վարիանտը մի բան աքաղո՛ւթ իււն է միայն Թռու-Քուչակի վարիանտից (եթէ միայն իրօք եղել է մի այդպիսի սարկաւազ երգիչ և սարկաւազ անունը Քնար-Հայկականի վարիանտի մէջ պատահականութեան մի գործ կամ զրչագիրների եղծումների արգասիք չէ): Կայ նաև մի այլ երգ, ուր դովասանքի առարկայ է սուրբ կոյսը, որին և իբրև բարեխօսի դիմում է երգիչը <sup>1)</sup>:

<sup>1)</sup> Այս երգը ես վերագրում եմ Թռու-Քուչակին, նրա միւս երգի հետ ունեցած լեզուի, ոճի և ընդհանուր բնատրութեան կողմից ունեցած նմանութեան վրայ լինուելով, և ոչ մի տեղ սպուած չլինելուն համար դնում եմ այստեղ իբր ծանօթութիւն միայն, հանելով Ս. Էջմիածնի մատենադարանի № 1640 ձեռագրի 121-րդ երեսից.

Գովասանք սուրբ աստուածածնին.

Ի վանեցի քօշակէ ասացիսալ.

Աղբուր կենդանի բըղում դանազան  
Մեղա քեզ մեղա կոյս անապական  
Գլուխ կուսանաց դասուցն պարծան  
Մեղա քեզ մեղա.

Երեսիդ փափագ զօրքըն վերնական  
Էրանեալ ընտիր թալգուհի անմահ  
Ժառանդող դրախտին և արքայութեան  
Մեղ.

Ի փառս լուսոյ խորհուրդ հիացման (ց)  
Մընօղ կենդանի Յիսուսի իջման  
Կամաւոր բաժակ ձեռքս փրկութեան  
Մեղ.

Ղամպար ճշմարիտ մեծ ուրախութեան  
Յիսուս նորոգեսց նորք և զամենայն  
Շնորհիւ քո լցան որդիք արամեան  
Մեղ.

Չարին հալածիչ պտուղ սրբութեան  
Ջահ մաքուր ոսկի լուսով աննման

Ինչպէս թու-Քուչակի, այնպէս և նահապետի երգերը կրում են ժգ. և ժէ. դարերի կնիքը, թէ իրենց կազմութեան և թէ ինչպիսի լեզուով գրուելու նկատմամբ Քուչակ նահապետը ապրելով ժգ. դարում և լինելով մի աշուղ երգիչ իրեն շրջապատող ժողովրդի մէջ, իր երգերն էլ գրում է հէնց այդ ժողովրդի խօսակցական, աշխարհիկ լեզուով և այս պատճառով նրա երգերի լեզուն ժգ. դարու աշխարհաբարն է գրաբարի գրաբարի հետ խառն: Նրա ոճը իր ժամանակի միւս երգիչների պէս պարզ է և սահուն: Լեզուի ընդհանուր բնաւորութեամբ նահապետի երգերը շատ նման են ժամանակակից միւս երգիչների երգերին: Նահապետի լեզուն պատկերաւոր է և նա այդ պատկերները վերցնում է իրականութիւնից և ստեղծագործում երևակայութեամբ: Նա նկարագրում է իր առաջադրած առարկան, բայց զրանով չբաւականանալով ուղում է լրացնել իր առարկայի նկարագրութիւնը և մի ալլ պատկերով, իսկ այստեղ, իրօք, նա պատկեր չի վերցնում բնութիւնից, ալլ պատկերացնում է այն հետեանքը կամ ազդեցութիւնը, ինչ որ կարող է լառաջացնել իւր առարկան

Ռաւազ աղբեր ջուր անմահութեան

Մեղ.

Սերովբէ սէր սուրբ, վեր (ա) պետութեան  
Տուն Յիսուս որդուն և բնակաբան  
Բարունի կուսէն մեղաց քաւարան

Մեղ.

Յնծութիւն հրեշտակաց բերկրութիւն մարդկան  
Ի իւսեալ ի լուսոյ մալր ուրախութեան  
Փըտեալքս մեղօք քե առողջացան

Մեղ.

Դուլալ մեծագին ի հապաշատուն  
Նաղութ և զմրութ և ալլ պատուական  
Ակատ լուսատու գանձ արքայական

Մեղ.

Զքեղ միշտ կու գովեն խաթարխութեան (?)  
Զըմուռ և ըղտաշխ և ըզկասիայն  
Նւ ալլ ծխելիք եազպետք սրբութեան

Մեղ.

Դու ես համասփիւռ ծաղկանց ամիրայն  
Քաֆուր վարդ պայծառ հոտովդ բուրման  
Դու լուսին այնան և արև դարնան

Մեղ.

իր շրջապատում, և այդ հետևանքի կամ աղղեցութեան նկարագիրը իբրև պատկեր ծառայացնելով, աւելի զօրեղ կերպով կարողանում է արտալուսել իւր դաղափարը: Նկարագրութեան այս ձևը ընտիր է: Օրինակ.

«Նկին ու բերին խապար  
Պիւլպիւլին թէ վարդն մեռաւ,  
Պիւլպիւլն ի վարդին սիրուն  
Սն ներկեց զշապիկն ու հազաւ.  
Շուտով մի բերին խաբար  
Պիւլպիւլին թէ՛ վարդն եկաւ:—  
Պատուեց զիւր սեռուկ շապիկին,  
Խատուտիկ շուտով մի հագաւ» (33):

Պատկերները կողմից նահապետի միտքը շատ արագ

Թէ զերկինքն ասեմ չէ ի քեզ նման  
Ժառանգողք դրախտին լոճէն խաբեցան  
Խաբողքն Եւայի քեզ ոչ մերձեցան

Մեղ.

Ի քեզ պարսպեալ բանն հայրական  
ՂԳաբրիէլ հրեշտակ եղեր պահապան  
Հեռացան ի քէն որդիք կորստեան

Մեղ.

Յարգանդդ թաւեցեր զտէրն անբաւական  
Աչիրտ է սովոր աստուածոտեսութեան  
Կաթմաբ սընուց (եր) զորդիդ աննման

Մեղ.

Մոցդ և (էն) անմատուց խորանի նման  
Գիրկըդ սերովբէ կալ ի տարածման  
Միտք ոչ հասանեն քեզ անհասական

Մեղ.

Գրախտ լուսեղէն պըտուղ մաքրութեան  
Պըտողովդ ապրեցան որք անսահացան  
Գըտան առ ի քէն զիր ազատութեան

Մեղ.

Ընտրեալ ի լուսու լուս ընտրողական  
Որ կալ և մնալ անուն լաւիտեան  
Պտուղ աննալի և լովակիմալն

Մեղ.

Եւ աստ ով ոք կան, քեզնով զօրանան  
Անդ ըզքեղ կու օրհնեն քեզնով պանծանան.  
Եւ փառաւորեն զաշխարհս ամենայն:

Մեղ.

է թուում և այս վառ երևակալութիւնից լառաջանում է այն որ երբ մի քանի առարկաներ իրար լետնից ուզում է նկարագրել և ըտտր առարկաներն էլ պատկերով ցոյց տալ,— չի կարողանում այդ պատկերները լրիւ տալ և արագութեամբ մէկից միւսը անցնելով ընթերցողին կամ լսողին է թողնում իր երևակալութեամբ լրացնելու պատկերի ամբողջութիւնը։ Քուչակ նահապետի լեզուն մի այլ լատկութիւն ևս ունի, այդ այն է, որ շատ է սիրում պատմական եղանակով գրել։ Բայց և երբեմն լալտնում է իր ցանկութիւնները կամ երանութիւնները և կամ նկարագրում է ներկալ եղանակով այն, ինչ որ այժմ իր հետ կատարուում է թէ իր ներքին աշխարհում և թէ դուրսը։ Նահապետը իբրև բանաստեղծ երգիչ ունի բանաստեղծական լեզու։ Նա աշխատում է որքան կարելի է պատկերաւոր ձևով ներկալացնել երգած առարկան, ուստի և գործ է ածում իր ժամանակին լատուկ և հասկանալի բառեր՝ մակղերներ, ածականներ և ալլնորոնց մեծ մասը արարերէն ու պարսկերէն լինելով թէև այժմ դժուարհասկանալի են դարձել, բայց ժամանակին ունեցել են իրենց լատուկ գեղեցկութիւնը և գործածուած տեղին համեմատ նրբութիւնը։ Գնենք այստեղ նահապետի լեզուին լատուկ աչքի ընկնող բառերը իրենց բացատրութեամբ <sup>1)</sup>։

Աջըդ քո փխտն հնտոյ վայր իջման  
Ահեակըդ դեհոն ի հապաչաստան  
Հայելըդ Տիգրիս և Եփրատ գնացման։  
Մեղ.

Աջըդ սուխձոյ, ահեակդ եզան  
Եւ դէմքըդ մարդոյ լուսով կազմութեան  
Գրկելիքդ արծիւ սաւառնաթեան  
Մեղ.

Աջըդ ոհաննէս է վրկալութեան  
Ահեակդ Մաթէոս է ճըշմարտութեան բան  
Մարկոս և Ղուկաս դիմացդ և թիկան։  
Մեղ.

Երբ քո միածինդ գալ ի դատաստան  
Անդր ժողովին աշխարհ ամենայն  
Դու բարեխօսեա վասն մարդկան փրկութեան։  
Մեղա.

Աշխարհս է նանիր ծաղիկին նըման

<sup>1)</sup> Բառերի բացատրութիւնը տուել է պ. Յ. Աճառեան.

- Մուճառաթ— մուճառ—հարստութիւն. մուճառաթ  
 =ակնեղէն (?)
- Մահալա—(արար.) թաղ, փողոց:
- Լուկ—ամեն, բոլոր.
- Տիւզէր—գեղեցիկ,
- Պատրուսեն—պատուաստուած ծառ.
- Շարշմաթ—շարշ (անհասկանալի), մաթ—քաղցու.
- Պէլթ— ոտանաւորի տուն
- Ժուկ ու մուկ— ծուռ ու մուռ.
- Ջուկակ—(արար) փողոց.
- Քարամ—չնորհ.
- Գէմ—հօ, խօ
- Վարօժ (պրսկ. վէրշ) վանեցոց բարբառով՝ վարշ.  
 —տատրակ
- Պտրելս— ժալռ, ատամ.
- Խալկին—(լունարէն) պղինձ, կաթնալ.
- Ղուսալ—հոգուլ անձկալը, սիրուլ լուղեր կամ զգաց-  
 տունք առ հասարակ.
- Յանդիճեւլ—(պրսկ) մտածել.
- Յաջալ—ղարմանալիք.
- Մթխալ—մսխալ.
- Կաֆալ—տուն, դաֆալ—զլուս.
- Ճուհար—զոհար.
- Ժխոր— ? (անհասկանալի)
- Խատուտիկ—գոլնզգոլն.
- Հաբեղանի—աբեղալ
- Մորճիկ—ծառի կանաչ ճիւղ.
- Ճիկէր—թոք
- Յանկի—անկից, լանկարծակի (?)
- Հիւքմի—թաղաւորի իշխանութիւն:

---

Որ ալս օրըն կալ վաղն ոչընչանան  
 Եւ քե հեռանալ ի մէնջ սատանայն:  
 Մեղ.

Ես նուաստ քօչակ որ ասեն ի վան  
 Չար մեղօք ելի և դատարկաբան  
 Որդն եմ և փոշի և հող և անպիտան  
 Մեղա քեզ մեղա կոլս անապական:

- Բեօշալ—(պրսկ.) անկիւն.  
 Թարկիկ—?  
 ձարակ—դարման.  
 Ծառափ—փալլ.  
 Հանցքուն—ալնպէս  
 Տալապ—(արաբ.) փափագ.  
 Վարճինակ—վարուժան, արու. թռչուն.  
 Ակնատ—թակարդ.  
 Կասկամ—բու.  
 Կանկանեմ—կանգնեմ, անկանիմ.  
 Թացան—սպուրի միջի փրթոշը.  
 Պեւան—(արաբ.) փորձանք.  
 Բարկ—թէժ, խիստ.  
 Վարմ—ցանց.  
 Գրին—?  
 Աղբաթ—(արբ.) վախճան  
 Խուժ—(թրք) աւազ.  
 Զիմաճիկ—?  
 Կթխալ—բաժակ.  
 Նափաղալ—(արբ.) պարէն  
 Զէնէհար—(պարս.) զգոյշ  
 Խամազ (արաբ.) բամբասող  
 Ղալատ—սխալ.  
 Ի հարաց—հետ իրերաց  
 Քեաֆիր—անողորմ, անհաւատ.  
 Հօք—վճիռ, իշխանութիւն (?)  
 Խլմէթ—դարդ.  
 Կտուած—նաշխած  
 Արմաղան—(տճկ) նուէր.  
 Թապիհէ—զետեղել, լարդարել  
 Պատլել—տապալել.  
 ձարակ մտնել—միջոց գտնել.  
 ձաղան—(պրս.) թռչուն ինչ, ցցունք, փետուր.  
 Թեղնիկ—թեի ձարերը.  
 Խիփ—ամօթ.  
 Նազար—լար աչք, նալուածք  
 Շլի—վիզ, պարանոց.  
 Փարուարիշ—պարարտ. ալլ և՛ (պարսկ.) սնունդ.

Պաքրի—?

Ալէմ—(արբ.) աշխարհ.

Շատր—լարդ.

Մուշկ—քաղցր հոտ ունեցող անասուն.

Լուրջ—կապոյտ

Ապիկ—շիշ, բաժակ.

ձիւպպէ—(արբ.) երկար վերարկու

Անպարի—անուշահոտութիւն, անուշ ըմպելիք և այլն.

Քուչակ նահապետի երգերի գեղարուեստական կազմութեան կողմից առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում և ալդ երգերի տաղափաշութիւնը. Հէնց իրենց, ալդ երգերի մէջ լիշում է տաղաշափութեան այն տեսակի մասին որով գրուած են նահապետի երգերը: Ալդ չափի անունն է հալերէն: Հնումը, (մինչև իսկ այժմ էլ) հալ ժողովուրդը սովորութիւն էր արեւ արդէն պատմական ինչ ինչ հանգամանքների ազդեցութեան տակ իր երգերը թուրքերէն երգել: Բայց երբեմն նա սիրել է իր միջից ծնած երգիչները՝ մալրենի լեզուով շինած երգերն ևս երգել, որոնց ձևի, կազմութեան կամ ընդհանրապէս տաղաշափութեան ու բովանդակութեան որպիսի լինելու պատճառով՝ տաճկերէն երգերից զանազանելու համար հալերէն անունն են տուել: Առհասարակ հալերէն երգերում երգուում են սիրով երգեր և ալդ երևում է նաև Քուչակի հետեեալ խօսքերից՝

«Կու խմէ ու հալերէն կասէ՛,

Թէ ինչ անուշ է սէրն ու գինին» (44),

Սոյնպիսի լիշատակութիւն կալ և Ակնայ երգերի մէջ՝

«Խմէ ուր ըսեմ անուշ


Անտունի մ'ըսեմ ուշ է ուշ

Սէրը սիրո՞ղին վալել է


Այ գինին անուշ խմողին» (ՀԱ. 438),

Ժամանակի ընթացքում հալերէն երգերի չափով երգեր են կազմուում Ակնայ շրջակայքում, որոնք անտունի են կոչուում, հաւանակածաբար կամ Անտոն անունով մէկի պատճառով և կամ առանց տների գրուելու պատճառով, և ալդ անունն էլ պահել են մինչև այժմ: Նահապետի երգերի չափն էլ, որ նոյն հալերէն երգերի չափն է, հետեեալ լատկութիւնները ունի: Քուչակ նահապետի երգերը բաժանուում են տնե-

րի, իսկ աները անորոշ թուով տողերի. տներից մեծ մասը քառատող է, քիչ են պատահում հինգ, վեց և եօթն տողերով տներ: Մի տուն միայն երեք տող ունի: Հայերէն կամ անտունի երգերի տողերը բաղկացած են 7 կամ 8 վանկից՝ երեք ոտքով, կաղմուած են եամբի և անապետի խառնուրդից և լինում են լանդաւոր Նոյնն են և նահապետի երգերի տողերը, բայց այստեղ տողերը կրկնած են. ալսինքն նահապետի երգերի մի տողը, այնպէս ինչպէս ըբրուած է Հայերզի մէջ, համապատասխանում է հայերէնի կամ անտունու երկու տողին: Նահապետի երգերն էլ լանդաւոր են և ամեն մի տուն ունի առանձին լանդ: Առհասարակ որևէ տան տողերը նոյն լանդով են վերջանում և լանդերի նկատմամբ ղուգահեռականութիւն կամ զրկախառնութիւն նահապետը չի սիրում: Բայց երբեմն, թէև շատ սակաւ, պատահում է որ այս կամ այն տան մէջ տողերից մէկն ու մէկը վերջանում է ըլորովին ալ լանդով քան ինչ որ ալդ տան միւս տողերն ունեն: Քուչակի երգերի չափի ընդհանուր սքեման այս է՝



Բայց շատ տեղ այս ընդհանուր օրէնքից շեղում է և երկրորդ, կամ շատ լաճախ առաջին տողը փոխանակ 7 կամ 8 վանկից լինելու, բաղկացած է լինում 9 կամ 10 վանկից և ստանում ենք կամ՝



Այս դէպքում անպատճառ ձեռագիրների արտագրութեան կամ բերնից բերան անցնելու ժամանակ փոփոխութեան է ենթարկուել երգը և մէկ կամ երկու վանկ աւելացել է իսկականին, որի հետեանքն է եղել և չափի խառնուելը՝ Օրինակ՝

«Հագեր գոյնզգոյն կապալ—7

կօճակ շարեր ու օղակն է կանաչ»—10

և՛

«Խօշեարս ալ ի դէմս ելաւ—7

Լուկ բարև երես հիւզումաթով»—9

Այստեղ աւելորդ է երկրորդ տողում շ ա Ր ե ր, իսկ չորրորդում կամ և ր ե տ ն է աւելորդ կամ հ ի ւ գ ու մ ա թ ո վ բառի տեղ մի երկավանկ կամ եռավանկ բառ պիտի լինէր։ Ընդհակառակն կանոնաւոր է՝

«Ձինչ որ ես ինձ հետ արի

— — —

Չէր արեր ոչ ոք հարումի

— — —

Շիշալ մի հալած ոսկի

— — —

Ի գետին ի վար վաթեցի

— — —

և մեծ մասամբ այսպէս են կազմուած տները, սակայն շատ են և՛

— — — ուլ տողերը.

Օր. «Օրհնեալ է Աստուծոյ անունն

Որ զբարեաց դուռինն է բացեր»:

բայց պատահում է և տող ուր վանկերի թիւը վեց է և առաջին ոտքը կազմուած է մի վանկից. օր.

— — —  
Իմ բարձրադնալ լուսին — 6

— — —  
Շատ բարև տուր իմ կիւղէլին — 8,

թէև այսպիսի դէպքում, մի ալ տեղ, այնպէս է դասաւորում բառերը, որ կարելի է մի ձայնաւոր աւելացնելով չափը տեղը բերել. օր.

Գնա (որ կարելի է կարդալ և գընա) ի վերայ թաղին  
 — — — — — 6 (7)

Բարձր պատ ու ծառն ի միջին  
 — — — — — և այլն

և այսպիսի շատ ու շատ տեղեր կան որոնցից երևում է, որ  
 Քուչակ նահապետի երգերը չափի կողմից մեծ փոփոխութիւն-  
 ներ կրել, կամ գուցէ հէնց ինքը նահապետը չափի գործա-  
 ծուծեան մէջ մեծ աղասութիւն է տուել իրեն:

Գ.

Նահապետի երգերի նմանութիւնը Վանայ ու Ակնայ այժմեան ժողո-  
 վրդական երգերի հետ, և այդ նմանութեան հետեանքը:

Մօտաւորապէս այսպիսի չափով են երգուում և այժմեան  
 Վանայ ու Ակնայ շրջակայքի ժողովրդական երգերից շատե-  
 րը, և նմանութիւնը նահապետի երգերի ու այդ ժողովրդա-  
 կան երգերի մէջ թէ չափի և թէ բովանդակութեան կողմից  
 շատ մեծ է: Արդ՝ ինչպէս բացատրել այդ նմանութիւնը: Սա-  
 կայն նախ քան այդ նմանութիւնները բերելը և բացատրե-  
 ւել տեսնենք թէ ովքեր են Ակնեցիք, որովհետև Վանը և Վաս-  
 պուրականը արդէն լայտնի են մնդ:

ԺԱ. դարում Վասպուրականի Սենեքերիմ Արծրունի հալոց  
 թաղաւորը տեսնելով Թաթարաց լարձակումը Հայաստանի վրայ  
 և զգալով իրեն հասանելիք մօտալուստ վտանգը, Վասպուրա-  
 կանը լանձնեց Վասիլ կայսեր և արքունիքով ու զօրքով Սե-  
 րաստիա գաղթեց: Թագաւորին հետեցին և երկրի ժողովրդից  
 մօտ 400,000 հալեր, որոնց մի մասը լետով Սենեքերիմի իշ-  
 խանների հետ Սերաստիան թողնելով եկաւ ու Եփրատի ափին  
 Ակն ու Արաբկեր քաղաքները հիմնեց <sup>1)</sup>, ուր նախ քան Հալոց  
 դալը շատ քիչ թուով թափառական լոյներ էին ապրում միայն,  
 որոնք կարճ ժամանակում ձուլուեցան Հալոց հետ: Սակայն  
 այժմեան Ակնայ ժողովուրդը աւանդութեամբ միայն, իրեն  
 Անիից գաղթած է համարում, որի համար հաստատուն փաստ  
 պակասում է: Մինչդեռ Վանից գաղթելու իրողութեան հա-

<sup>1)</sup> Չամչեան, Պատմութիւն Հալոց. հտր. Բ. գիրք IV,  
 գլ. 1, 2. Երես 902—3:

մար մի փաստ էլ աւելանում է այն հանդամանքը, որ Հինճիճեան իր «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի» մէջ լիչում է՝ թէ Ակնայ զիւղերից մէկի անունն էլ «վան գեղ» է կոչուում: Ուրեմն վասպուրականի ժողովուրդը գաղթելով հաստատուեցաւ Ակնայ շրջակայքում, հարկաւ, տանելով իր հետ իր ազգային սովորութիւնները և ժողովրդական խաղերն ու երգերը. մենք ունենք Ակնայ ու վասպուրականի կամ վանայ այժմեան հայ ժողովրդական երգերը, որոնք Քուչակ Նանայեօտի երգերի հետ համեմատելով, երկուսի միջև մեծ նմանութիւն ենք գտնում: Համեմատենք այդ նման կէտերը և նմանութեան չափը տեսնելուց լսող աշխատենք որոշել թէ որչափ առընչութիւն են ունեցել իրար հետ: Նախ համեմատենք Քուչակ Նահայեօտի երգերը Ակնայ այժմեան երգերի հետ, ապա նոյնը կ'իտրձենք և վանայ այժմեան ժողովրդական երգերի հետ: Արդէս օր.

ՔՈՒՉԱԿ ՆԱՀԱՊԵՏ

ԱԿՆԱՅ ԵՐԳԵՐ.

Դու ո՞վ ես որ լերդիկդ ես ելեր,  
 Ղալդ օտար հողդ կու կոխես,  
 Թէ վարդ ես նէ վար եկոյ,  
 Թէ օտար ծաղիկ նա գնա.  
 Ոչ վարդ եմ ի վար գալու.  
 Ու ոչ օտար ծաղիկ գնալու,

Ատ ո՞վ ատ երդիքտ եկեր,  
 Ատ օտար հողը կու կոխէ:  
 Թը մարդ ես նը վար եկու,  
 Թը շուշան ծաղկիկ գնալու:  
 —Ուչ մարդ եմ ի վար գալու,

Եկեր սիրող եմ ասեր,  
 Ոչ գալու եմ և ոչ գնալու:  
 Տեկանց «Հայերդ» եր. 30.

Ուչ շուշան ծաղիկ գնալու:  
 Պիւպիւլ լիմ ու ժուռ գալու,  
 Շատ երում ունեմ գնալու:  
 Յ. Ճանիկեան՝ Հնութիւնք  
 Ակնայ . եր. 443

Այս երկու երգերի նմանութիւնը ակնհեր է. տարբերութիւն նկատուում է չափի մէջ. Քուչակի երգի տողերը մէկ կամ երկու վանկով աւելի է միւսից: Վերցնենք այլ տեսակի Քուչակի երգերում երբեմն մի կամ երկու տող, որ դիալոգի ձև ունեցող տեղերում բաւական արտայայտիչ բնատրութիւն ունի, իր նմանը ունենում է և Ակնայ երգերի մէջ կրկին դիալոգի ձև ունեցող տեղերում և աչքի բնկնող դարձուածներում. օր.

ՔՈՒՉԱԿ.

ԱԿ. ԵՐ.

Իմ բարձրագնայ լուսին

Լնսիկ, դուն կամաց կամաց՝...

Շատ բարեւտուր իմ կիւզե-  
լին.

—Ձբարևդ ես ի սուր տանեմ  
Ձեմ գիտեր դուռնն կիւզե-  
լին.

—Գնա ի վերայ թաղին,  
Բարձրպատ ու ծառն ի մի-  
ջին,

Նստեր ի ծառին շքին,  
Կիսմէ ի լուրջ ապիկին.

ՏՀ. 44.

Ան դանկտեմ դուն ալվա գնան.  
Գնա խարիպիս ըսէ.

Չի կենայ, թողելէ ու գալ.

— Բարևդ ի գլխուս վրայ,

Չի գիտեմ դուռը խարիպիս:

— Եկուր նշանով ցուց տամ:

Բարձր պատ ու ծառ շքերուն:

Նստեր ի ծառին շքին

Խատ ու մատ խատէհն ի ափի:

ՀԱ. 440.

Նոյնպէս և հետեակ կտորը՝

ՔՈՒՉԱԿ

ԱԿ. ԵՐ.

Ձալախն ալ ափին ունի  
Ոչ խմէ, ոչ տալ խմելու.

ՏՀ. 42

Խատէհն ուր ափիտ ունիս  
Կամ խմէ կամ տալ խմողին:

ՀԱ. 440.

Քուչակի ալ տողերից լետոյ պալիս են<sup>77</sup>չորս ալ տող,  
ուր լիշուամ է հայերէն երգերի մասին, ալդ տողերը իրենց  
նմանը ունին Ակնայ երգերում, ուր հայերէն ի փոխարէն  
անտունն ի անունն է լիշուամ:

ՔՈՒՉԱԿ

ԱԿ. ԵՐ.

Նստեր է ծառի շքին,  
Կիսմէ զիւր լուրջ ապիկին.

Կիսմէ ու հայերէն կասէ  
Թէ ինչ անուշ է<sup>81</sup>սէրն ու գինին:

ՏՀ. 28 և 44

Նստեր է ծառին շքին  
Խատու մատ խատէհն ի ափին.

Խմէ ուր ըսեմ անուշ  
Անտունի մըսեմ ուշ է ուշ:

ՀԱ. 438 և 440

ՔՈՒՉԱԿ

ԱԿ. ԵՐ.

Վերի փողոցովդ ի վար կուգի  
Ճուկ ու մուկ հաղարզուկակով,  
Խօշեարս ալ ի դէմս ելաւ,

Լուկ բարև երեւ հիւզումաթով  
Գրկեցի ու պինդ պագի

Ձիւր աչերն խիստ կարօտով,  
Կերթար ու լալով կասէր

Թէ ինչք խաղք էր եղանք ցո-  
րեկով:

ՏՀ. 28

Մօրուց ի մանկութենէս  
Ես ազապ աղջիկ չես պաղեր

Ըսօր աղուոր մի պագի  
Գնացքի մօրկանը գալտի (մօ-  
րը զանգատուի)

Ըսի թէ հատ մի առնիմ,  
Թունդ ելաւ, թուխ աչքն ի  
լալու:

Լացաւ ու լալով ըսաւ,  
«Մար, զիս խաղք արիր ցո-  
րեկով:

Բռնեցիր զօրով ճորով,  
Պագմ՝ առիւր հաղարնազերով:

ՀԱ. 446 և 453

Աւելի սերտ նմանութիւն երեւում է հետեւեալ երկու օրինակների մէջ.

ՔՈՒՉԱԿ

ԱԿ. ԵՐ.

Ձկնակն ի ջրէն հանուի,  
Ջուր մալ ձգեն նա ապրի.  
Հանցդուն եմ ի քո սիրովդ,  
Ձինչ ձկնակն որ թալէ թլի  
Ձձուկն ի ջրէն հանեն  
Նա տըտան տալ ու մեռանի  
Երբ դիս իմ եարէն դատեն,  
Մեռնիմ ու ալլ ճար մի չնի:  
ՏՀ. 41

Ձկնակ մ'ուր ջրէն դատես,  
Ջուր մին ալ ձգես նը չապրիր:

Մարիկն ուր տղէն դատես,  
Ճար չի կալ՝ պիտի մեռանի  
ՀԱ. 487

և՛

ՔՈՒՉԱԿ

ԱԿ. ԵՐ.

Այս ծովական գիշերս ի բուն  
Ես երկու շրջան մանեցի.  
Խօշեարս ալլ ի միտս ընկաւ՝  
Թէզմ ելալ զՎահրաս վերուցի,  
Փարչիկմ ալլ անուշ գինի,  
Առի խօշեարիս դուռն դնացի,  
Խօշեարամ զդուռն բաց,  
Ձիւն եկեր ոտվիս կու մըսի:  
ՏՀ 27

Այս գիշեր մինչի լուսյաւ,  
Ես երկու խանդալ (մանածի կա-  
ժը, վաթթթը) մանեցի:  
Իմ եարն ալ ուր միտքս ինկաւ,  
Թեզ մ'եկալ ջահս կործեցի.  
Գցի (գնացի) իմ եարին դուռը,  
Ձուն եկեր, ոտուիս կու մսի:

ՀԱ. 451

ՔՈՒՉԱԿ

ԱԿ. ԵՐ.

Ձիմ եարն էմանէթ կու տամ  
Ի վարդին մէջ պահեցէք.  
. . . և ալլն. ՏՀ 30

Ծաղիկ մ'ամանեթ կու տամ  
Վարդերուն մէջը պահեցէք:  
. . . և ալլն ՀԱ. 436

Քուչակի երգերի և Ակնալ երգերի միջև ալսպիսի նմանութիւններ շատ ու շատ կան: Ջուր տեղը մեր գրութիւնը չերկարացնելու համար բաց ենք թողնում ալսպիսի նմանութիւնները հէնց այժմ արդէն մեր ձեռքը եղած օտո 25 կտոր, բաւականանալով ալսքանով:

Քիչ չեն նաև Քուչակի երգերի և Վանալ ժողովրդական երգերի միջև եղած նմանութիւնները: Սկսենք որ և է տեղից:

ՔՈՒՉԱԿ

ՎԱՆԱՅ ԵՐԴԵՐ

Գիշերս ես ի դուրս ելայ,  
Թէ եար մի դանում սիրելու  
Գրողն ալ ի դէմս ելաւ,  
Լուկ նաղար արաւ տանելու.  
Գիշերս ես ի քուն էի,  
Քունս ի ներս սրտիկս երեցաւ,  
Եկին ու բերին խապար,  
Քո սիրած եարն զքեզ մոռա-

Գիշեր արև էլա,  
Թուխ ամպը անուշ կցողէր,  
Չարկամ դէմ առևց  
Սրտիկս խորովից.  
Ասաց դեմը կերթաս,  
Քեո եար մեռերի:

Շեկեց՝ «Վանայ Սաղ»:  
Եր. 50

ՏՀ 42 և 33

Հետեհալ կտորի մէջ ալդ նմանութիւնը աւելի սերտ է  
երևում թէ բովանդակութեան և թէ դարձուածքների կողմից:

ՔՈՒՉԱԿ

ՎԱՆԱՅ ԵՐ.

Մարիկն անիծեց զորդին՝  
Իմ որդի դուն զարխանանս.  
Երթաս ի լոտար երկիր,  
Ձղարիպին դատրն դիտենաս.  
Ձքարն սնարք առնես,  
Ի վերայ աւազին քնանաս,  
Վաղվէնէ քնէն վեր ելնես,  
Քան զԱտուած ալ ճար չու-  
նենաս:

Մարդ որ մարդու կանիծի,  
Թող ասի՝ կարիքանաս.  
Սար քեզ սնար էլնի,  
Աւազի մէջ թիւլանաս.  
Թէ քեո աշխարհ լիշես  
Ողջ անձով էլնես ցաւադիւն:

ՏՀ 42—43

Շ. Վ—Ս. 52

Քիչ նմանութիւն չեն ներկայացնում և հետեհալ կտոր-  
ները.

ՔՈՒՉԱԿ

ՎԱՆԱՅ ԵՐ.

Իմ եար բարձրագնայ լուսին,  
Յճը երթաս գիշերդ անհուն.  
Շատ լերդիք ի վար հալիս,  
Կու տեսնես շատ կիւզէլի քուն:

Լիւսին, տիւ պանցրիկ լիւսին,  
Սր կպիւլութես մէջ տանխինդիւն  
Շատ տուն կմտնես, շատ քեօշկ  
ու սարայ,  
Էրթաս կայնես իմ կարիքի  
զլսու վրայ:

ՏՀ 44

Շ. Վ—Ս. 64.

կամ՝

ՔՈՒՉԱԿ

ՎԱՆԱՅ ԵՐ.

Երկու եարուկ զիս կուզէ

ես իրեք տէկեերկին տեսայ

Չգիտեմ թէ արն է սիրուն,  
 Մէկն ցերեկուան արև,  
 Մէկն լուսին մութն գիշերուն  
 Լուսին, չեմ սիրեր զքեզ  
 Դուն սովոր ես խօր կենալուն  
 Երթամ զարեգակն սիրեմ,  
 Որ ծագէ լուսն առաւօտուն:

Ինոնց սիրուն հէքմաթ մնացի  
 Ինչ էն ճեռչն էր, արեգական  
 նման,  
 Ինչ կէս օր կամար կ'կապի:  
 Ինչ էն միժնէկն էր, լիւսնին  
 էր նման,  
 Որ տանխիլնդիլն կը բղրի:  
 Ինչ էն պստիկն էր լիւս աստղի  
 նման:

ՏՀ. 43 Որ առաւտման կեախին կը  
 ծագկի:  
 Ծ. Վ.—Ս. 52

Մի ուրիշ օրինակ ևս, ուր այսպիսի նմանութիւն աւելի  
 մեծ չափով կայ.

ՔՈՒՉԱԿ

ՎԱՆԱՅ ԵՐ.

Իմ հար դուն լերդիկն ի քուն,  
 Ծոցդ լոյս տայր աստղերուն.

Մեր իլգիլն զիմաց ձեր իլգիւն,  
 Քիւն կամազ մարդու գլխուն.

ՔՈՒՉԱԿ

ՎԱՆԱՅ ԵՐ.

Կամ առ զիս ի ծոցդ ի քուն,  
 Կամ տէսթուր տուր երթամ ի  
 տուն. — Ոչ կառնում ի ծոցս ի քուն,  
 Ոչ տէսթուր տամ երթամ ի  
 տուն.  
 Հանցեղ երբերուն պահեմ,  
 Մինչ որ գալ լոյսն առաւօտուն:

Սա զիս առ քեռ ծոցիկ անեմ  
 անուշ քիւն,  
 Սա դաստուր տուր, էրթամ իմ  
 խօր տուն:  
 — Ոչ քէկ կառնիմ իմ ծոց,  
 ա-  
 նես անուշ քիւն,  
 Ոչ դաստուր կուտամ էրթաս  
 քեռ խօր տուն:  
 Քեկ անչափ կը պախեմ սօխում  
 էրէրում,  
 Չիւմ կեալ լեոս առաւրտուն:

ՏՀ. 43

ԾՎ.—Ս. 50—51

և այլն, և այլն . . . . Սլոժմ՝ դառնանք մեր խնդրին.  
 — Բնչ են ասում մեզ այս նմանութիւնները:

Բերած օրինակներից տեսնուում է ինքնին, թէ որ աստի-  
 ճանի մեծ է փուչակ Նահապետի երգերի և Ակնալ ու Վանալ  
 այժմեան ժողովրդական երգերի միջև եղած նմանութիւնը:  
 Հետևապէս պէտք է լակամայից խոստովանել, որ Քուչակի  
 երգերը որ և է ներքին առընչութիւն ունեն այդ երկու տե-

զերի երգերի հետ Մենք տեսանք մի քիչ առաջ, որ Ակնեցիք նոյն վանի ժողովուրդն են, միայն գաղթած ժԱ դարում։ Միւս կողմից գիտենք որ Քուչակ Նահապետը հանդէս է եկել ժՁ. դարում, վանում։ Ուրեմն Ակնեցոց գաղթը առնուազն 500 տարի առաջ է եղել Քուչակի երևան գալուց։ Նոյնպէս համեմատութեան համար բերած օրինակներից տեսնել կարելի է, թէ որքան սերտ նմանութիւն ունեն Ակնայ և վանայ ալժմեան ժողովրդական երգերը միմեանց հետ <sup>1)</sup>), որոնց երկուսին, փոխադարձաբար, նմանում էր և Քուչակի երգերը։ Եթէ ընդունենք, թէ Քուչակի երգերը ինքնուրույն են եղել և նորա երգելուց լետոյ շարունակ երգուել է ժողովրդի մէջ, իրենց ժողովրդական բնաւորութիւն ունենալուն համար, ու այսպիսով դոցանից է կաղմուել վանի ալժմեան ժողովրդական երգերը,—այն ժամանակ ինչպէս բացատրենք Ակնայ երգերի և Քուչակի երգերի առընչութիւնը։ Դժուար թէ գաղթական Ակնեցիք, իրենց գաղթից լետոյ, մինչև ժՁ դար, և ժՁ դարից լետոյ էլ մի-երկու դար այս կողմը, այնպիսի մի մեծ, համախական, շփումն ունեցած լինին վանայ ժողովրդի հետ, որ լետոյ կրկին Ակն տեղափոխուելով, այդ ժամանակու՞մ միջոց ունենալին վերցնել վանայ ժողովրդից նոցա՝ Քուչակից ժողովրդին անցած՝ ժողովրդական երգերը և Ակն տանել կարողանալին, մանաւանդ որ Հայաստանի վիճակը ժԱ.—ժՁ. դար շատ էլ բարուք չէր։ Ակնեցոց գաղթից լետոյ Տուրքիւ, Ալիասլան և Մելիքչահ իրենց հրոսակներով Հայաստան թափուեցան հէնց նոյն ժԱ. դարում։ ԺՂ. դարում դոցա գործը շարունակել սկսեցին թաթարները Չարմաղանի առաջնորդութեամբ, ժԳ. և ժԴ. դարերում լանկթամուրի արշաւանքն էր և այդ արշաւանքին հետևող մանր մունր կռիւները ամեն տեղ, ժՆ. դարում Օսմանցիք երևում են և նորից կրակ դառնում Հայոց գլխին, վերջապէս ժՁ. դարում Շահաբասի սարսափելի արարքներն են կատարուում.—իսկ ժՁ. դարից մինչև ժԸ. դարի վերջերը կատարուում են կարճ ընդմիջումներով Պար-

<sup>1)</sup> Իմ այս գրութիւնը արդէն պատրաստ էր, երբ իմ ծանօթներից մէկը, պատահամբ միայն, լալտնեց ինձ, թէ «Բիւրակնի» հին համարներում բաւական երկար կերպով ցոյց է տրուած Ակնայ և վանայ ժող. երգերի նմանութիւնները միմեանց հետ։ Դժբաղդաբար, ոչ մի կերպ չկարողացանք ձեռք բերել «Բիւրակնի» այդ համարները։

սից և Օսմանցւոց երկարատև պատերազմները: — Հետևապէս, Ալինայ և Վանայ ժողովրդական երգերի նմանութեան, շատ անգամ գրեթէ բառացի լինելու պատճառը Քուչակի երգերի հետ, պէտք է ժԱ. դարից առաջ փնտռել. իսկ այդ պատճառը այն է, որ Ալինեցիք նոյն Վանայ ժողովուրդը լինելով իրենց զաղթի ժամանակ մալր-հայրենիքից տարել են իրենց հետ և իրենց ժողովրդական երգերը և առանձին կերպով զարդացնելով, հասցրել մինչև մեր օրերը, հարկաւ փոփոխելով, բայց և միշտ էականը նոյնը պահելով. իսկ թէ կարելի բան է ժԱ. դարից մինչև այժմ այդ երգերի զոլութիւն ունենալու հնարաւորութիւնը, իբրև անպացոյց և օրինակ թող ծառայէ մեր ժողովրդական Ս աս մ ա յ ծ ա ե ր կ ամ Պ ա ւ ի թ ե ւ Մ հ ե ր անունով լայտնի զիւցազնական վէպը, որ իր սկիզբը առնում է՝ կամ է. դարից Քրիստոսից առաջ, երբ Հայաստան են գաղթում Աղրամելիք և Սանասար, կամ Ն. դարից Քրիստոսից լետոյ, երբ Աստուածաշունչը մեղնում հայերէնի թարգմանուեցաւ <sup>1)</sup>: Ալինայ և Վանայ ժողովրդական երգերի առընչութիւնը այսպէս դնելուց լետոյ պէտք է ընդունենք ուրեմն, որ այդ երգերը մինչև ժՁ. դար, այն և՛ մինչև Քուչակի երևան գալը, արդէն կալին ժողովրդի մէջ և Նահապետը իբրև աշուղ թափառելով Վանայ շրջակայքում հաւաքել է այդ ժողովրդական երգերը և դրի է անցրել իր ինքնուրոյն երգերի հետ միասին: Գոնէ այսպէս կարող ենք ասել Նահապետի երգերի այն կտորների համար, որոնց նմանութիւնը այժմեան ժողովրդական երգերի հետ ակններև է: Իսկ Նահապետի երգերի միւս մասերը՝ խրատական, կրօնական բովանդակութիւն ունեցողները՝ կարելի է զուտ ինքնուրոյն համարել, ինչպէս որ ժամանակակից միւս երգիչները ունեն: Եւ թէ և այդ միւս երգիչներն ևս իրենց սիրով երգերում ժողովրդական մօտիւ մտցնում են, բայց ոչ այն չափով և այնպէս, ինչ չափով և ինչպէս որ այդ՝ Քուչակի երգերում է տեսնուում: Այսպէս ուրեմն Քուչակ Նահապետի սիրով երգերի մեծ մասը իր ժամանակի ժողովրդական երգերն են, որոց նա հաւաքել է:

<sup>1)</sup> Ուր և (Պ. թաղ. ժ.թ. 37, և Նս. մրգ. 113 38) պատմուած է երկու եղբայրների իրենց հօրը սպանելու և Հայաստան փախչելու պատմութիւնը, որ այժմեան վէպի էական կէտերից մէկն է և զտնուում է, գրեթէ, բոլոր վարիանտներում: Տես նաև «Աբարատ» 1901 թ. երես՝ 252—254.

Յամենայն դէպս, Գուշակ նահապետի երգերը հանդիսանում են իբրև մեր միջնադարեան ջրանաստեղծութեան ամենագեղեցիկ կտորներից մէկը և թերևս աւելի բարձրանալ նոցա վարկը եթէ կարելի լինի վերականգնել նոցա սկզբնական ձևը, մանաւանդ եթէ գտնուեն և խմբագրուեն Նահապետի միւս՝ մեր ձեռքը չհասած երգերը։ Նահապետի երգերում գործածուած գեղեցիկ պատկերների ահագին քանակութիւնը, գեղարուեստական նորք և ընտիր ձևերի շատ օրինակները և բանաստեղծի վառ երևակալութիւնը ահագին նիւթ կարող են տալ ամեն մի բանաստեղծի, մանաւանդ արժանան մեր հայ բանաստեղծներին, թող հետաքրքրուին մեր բանաստեղծները Գուշակի ալդ երգերով, թող ուսումնասիրեն Նահապետի երգերի առանձնալատուկ տաղաչափութիւնը, որ նոցա գրեթէ բոլորովին անծանօթ է,—և նոքա կտեսնեն, որ մինոր, գեղեցիկ չափի հետ միասին կալ և զգացմունքների մի ալլ աշխարհ, երևակալութեան մի նոր մթնոլորտ։

ՅՈՎ. ՀԱՆՆԷՍ Թ. Ա. ԴԷՈՍԵԱՆ

